

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ  
ՌԱԴԻՈՇԵՌԱՐՁԱԿՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Սույն օրենքով կարգավորում են Հայաստանի Հանրապետության տարածքում շահագործվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ճառագայթող ռադիոհաղորդակցության սարքավորումների հայտնաբերման և դրանց հետագա շահագործման դադարեցման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝
  - 1) **իրավասու մարմին**՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, որն իրավասու է իրականացնելու սույն օրենքով իրեն վերապահված լիազորությունները.
  - 2) **անձ**՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը տնօրինում, տիրապետում և (կամ) շահագործում է ռադիոհաղորդակցության սարքավորումներ.

**Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը**

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում ռադիոհաճախականային ռեսուրս և ռադիոհաղորդակցության սարքավորումներ շահագործող անձանց վրա:
2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի

Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության կողմից շահագործող ռադիոհաղորդակցության սարքավորումների վրա:

#### **Հոդված 4. Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության խնդիրները**

1. Էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում տեխնիկական վերահսկողության պետական քաղաքականության խնդիրներն են՝

1) տեխնիկական կանոնակարգերով և օրենսդրական այլ ակտերով սահմանված պետության անվտանգության համակարգերի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, նավիգացիայի և երկաթուղու համակարգերում ռադիոէլեկտրոնային միջոցների անխափան աշխատանքի ապահովումը.

2) մարդու կյանքի և առողջությանը, շրջակա միջավայրի, ինչպես նաև ռադիոհաղորդակցության սարքավորումների շահագործման անվտանգությանը սպառնացող թերությունների և բացթողումների բացահայտումը.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ռադիոհաղորդակցության սարքավորումներից ճառագայթվող աղբյուրների բացահայտումը.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանող ռադիոհեռահաղորդակցության սարքավորումների աշխատանքի ընթացքում էլեկտրամագնիսական համատեղելիության ապահովումը:

#### **Հոդված 5. Իրավասու մարմնի գործառույթները**

1. Իրավասու մարմինը՝

1) իրականացնում է ռադիոհաղորդակցության սարքավորումների տեխնիկական **վերահսկողություն**՝ դիմում-բողոքների, Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կամ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ Կարգավորող) կողմից ներկայացված Հայտերի (գրության), ինչպես նաև իրականացված ռադիոէթերի մոնիթորինգի արդյունքների հիման վրա.

2) ռադիոհաղորդակցության սարքավորումների տեխնիկական վերահսկողության արդյունքում կազմվում է արձանագրություն, որի ձևը և լրացման կարգը սահմանում է իրավասու մարմինը: Արձանագրությունը կազմվում է տեղում երկու օրինակից և մեկ օրինակը տրամադրվում է ռադիոհաղորդակցության սարքավորումներ օգտագործողին:

3) իրականացնում է մարդու կյանքի և առողջությանը, շրջակա միջավայրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ռադիոհաղորդակցության սարքավորումներից ճառագայթվող աղբյուրների հայտնաբերումը և այդ սարքավորումների հետագա աշխատանքի դադարեցումը:

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխանող ռադիոհեռահաղորդակցության սարքավորումների աշխատանքի ընթացքում էլեկտրամագնիսական համատեղելիության ապահովման վերահսկումը:

5) մարդու կյանքի և առողջությանը, շրջակա միջավայրի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ճառագայթող ռադիոհաղորդակցության սարքավորումների հայտնաբերման դեպքում, իրավասու է կապարակնքման միջոցով դադարեցնել այդ սարքավորումների հետագա շահագործումը:

2. Սույն հոդվածի 1-ի մասի 5-րդ կետում նշված գործառույթների իրականացման համար օրենսդրության պահանջներին չհամապատասխանող ճառագայթող ռադիոհաղորդակցության սարքավորման տեղակայման վայր մուտք գործելու համար իրավասու մարմնի ներկայացուցիչները պարտավոր են ներկայացնել տվյալ մարմնի անվանմամբ կնիքով կնքված վկայական:

3. Սարքավորման մոտ մուտքը խոչընդոտելու դեպքում իրավասու մարմնի ներկայացուցիչները տվյալ տարածք կարող են մուտք գործել միայն իրավապահ մարմնի ներկայացուցիչների ուղեկցությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

## **Հոդված 6. Ռադիոհաղորդակցության սարքավորումներ շահագործող անձանց իրավունքներն ու պարտականությունները**

1. Ռադիոհաղորդակցության սարքավորումներ շահագործող անձինք իրավունք ունեն իրավասու մարմնի տեխնիկական վերահսկողության իրականացմամբ պայմանավորված գործողությունները բողոքարկելու վերադասության կամ դատական կարգով:

2. Ռադիոհաղորդակցության սարքավորումներ շահագործող անձինք չպետք է խոչընդոտեն իրավասու մարմնի ներկայացուցիչների մուտքը շահագործվող սարքավորումների տեղադրման վայր՝ սույն օրենքին համապատասխան տեխնիկական վերահսկողություն իրականացնելու համար.

## **Հոդված 7. Ռադիոհաղորդակցության սարքավորումների կապարակնքման կարգը**

1. Կապարակնքումն իրականացվում է այնպես, որ կապարակնքված սարքը շահագործելիս կապարակնիքը խախտվի:
2. Կապարակնքելու իրավասություն ունի ռադիոհաղորդակցության սարքավորումները շահագործող և տիրապետող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց մոտ տեխնիկական վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի՝ կապարակնքման նպատակով հաշվառված կապարակնիք ունեցող պաշտոնատար անձը (անձինք):
3. Սույն օրենքի 4-րդ հոդվածում նախատեսված դեպքերում կապարակնքումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհաղորդակցության սարքավորումների տեղադրման վայրերում (շենք շինություններում) այդ սարքավորումները շահագործող և (կամ) տիրապետող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց ներկայությամբ, իսկ կապարակնքմանը ներկա լինելուց հրաժարվելու դեպքում սույն օրենքով սահմանված կարգով կազմվում է կապարակնքմանը ներկա լինելուց հրաժարվելու մասին արձանագրություն: Արձանագրությունը կազմվում է տեղում երկու օրինակից և մեկ օրինակը տրամադրվում է ռադիոհաղորդակցության սարքավորումներ շահագործողին:

4. Կապարակնքումն ավարտելու պահին կապարակնքում իրականացնող իրավասու մարմնի պաշտոնատար անձը (անձինք) կազմում է (են) արձանագրություն, որտեղ նշվում են կապարակնքում իրականացնող իրավասու մարմնի պաշտոնատար անձի (անձանց) անունը, ազգանունը, պաշտոնը, կապարակնքման օրը, ժամը, վայրը, կապարակնիքի համարը և կապարակնքվող սարքի վերաբերյալ տեղեկատվությունը (տեսակը, գործարանային համարը և այլն): Արձանագրությունը ստորագրվում է կապարակնքում իրականացնող իրավասու մարմնի պաշտոնատար անձի (անձանց) և ռադիոհաղորդակցության սարք շահագործող անձի (նրան փոխարինող պաշտոնատար անձի) կողմից:
5. Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը տրվում է ռադիոհաղորդակցության սարք շահագործող անձին (նրան փոխարինող պաշտոնատար անձին), որը պարտավոր է ապահովել կնքված սարքավորման և կապարակնիքների պահպանությունը:
6. Կապարակնքված սարքավորման շահագործումը թույլատրվում է իրավասու մարմնի կողմից արձանագրված խախտումները վերացնելուց և կապարակնիքը հանելուց հետո:
7. Արձանագրված խախտումների վերացման մասին իրավասու մարմինը մեկ աշխատանքային օրվա ընթացքում կայացնում է որոշում ռադիոհաղորդակցության սարքավորումների շահագործման թույլտվության մասին:
8. Կապարակնքմանը խոչընդոտելը կամ կապարակնիքների պոկելը, վնասելը, կապարակնիքները փոխելը (կեղծելը) առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:
9. Կապարակնքումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով կապարակնքման օրվանը հաջորդող մեկամսյա ժամկետում կամ դատական կարգով»:

#### **Հոդված 8. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Մ**  
**«ՌԱԴԻՈՇԵՌԱՐՁԱԿՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ**  
**ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ**

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նպատակն է հստակեցնել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետով Իրավասու մարմինն վերապահված իրավասությունները:

Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը հիմնականում կարգավորվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով, գերատեսչական և այլ իրավական ակտերով: Գործող իրավական ակտերում նախատեսված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհաղորդակցության սարքավորումների տեխնիկական վերահսկողության կարգը:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծով սահմանվում է ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման տեխնիկական վերահսկողության կարգը, որն իրավական հիմք կհանդիսանա համապատասխան վերակսկողություն անցկացնելու և տեխնիկական եզրակացություններ տալու համար:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության կողմից:

**4. Ակնկալվող արդյունքը**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդունվելու դեպքում հնարավոր կլինի հայտնաբերել, բացահայտել և բացառել անկախ սեփականության ձևից շահագործվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհեռարձակման սարքավորումները և կապահովի պետության անվտանգության համակարգերի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի

Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության,  
նավիգացիայի և երկաթուղու համակարգերում ռադիոէլեկտրոնային միջոցների  
անխափան աշխատանքը:

## **Ց Ա Ն Կ**

**Իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է «Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն:

## **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին**



«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին»  
ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի  
եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ  
ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում:

#### **Ց Ա Ն Կ**

##### **«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի հեղինակների**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին»  
ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և  
տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի կապի և  
տեղեկատվայնացման վարչության կողմից:

#### **Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

##### **«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին**

«Ռադիոհեռարձակող սարքավորումների տեխնիկական վերահսկողության մասին»  
ՀՀ օրենքի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ  
կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում: